



**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ

Հաշվետվություն «Հերիթեյջ» հիմնադրամի կողմից հրապարակվող՝
2019թ. զեկույցի հիման վրա



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	1
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ	1
ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	3
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ	7
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԴՐՈՒՄՆԵՐ.....	11

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական ազատության ինդեքսը փաստացի տվյալների վրա հիմնված հետազոտական աշխատանք է, որը իրականացվում և հրապարակվում է «Հերիթեյջ» հիմնադրամի կողմից տարեկան կտրվածքով: Ինդեքսի հաշվարկը և հրապարակումը, ըստ հեղինակների, ինչ որ չափով օգնում է աշխարհը տարեցտարի դարձնել ավելի լավը, քանի որ այն երկրների միջև ստեղծում է մրցակցություն տնտեսական ազատության ավելի բարձր միավոր ստանալու և վարկանիշային աղյուսակում ավելի բարձր դիրք գրավելու համար: Այս գործընթացից շահում է նախ և առաջ բնակչությունը, քանի որ պետական քաղաքականության այն բարեփոխումները, որոնք նպաստում են տնտեսական ազատության ինդեքսի աճին, միաժամանակ օգնում են հաղթահարել աղքատությունը և հասնել բարեկեցության ավելի բարձր մակարդակի:

ՀՀ տնտեսական ազատության ինդեքսը (այսուհետ՝ ՏԱԻ), ըստ 2019թ. զեկույցի¹, կազմել է 67.7 միավոր, ինչի արդյունքում Հայաստանը 180 երկրների շարքում զբաղեցրել է 47-րդ հորիզոնականը՝ նախորդ տարվա նկատմամբ նահանջելով 3 հորիզոնական: Ըստ «Հերիթեյջ» հիմնադրամի դասակարգման՝ 2019թ. Հայաստանը համարվել է «չափավոր ազատ» տնտեսություն ունեցող երկիր: Եվրոպական տարածաշրջանի 44 երկրների շարքում Հայաստանը զբաղեցրել է 24-րդ հորիզոնականը:

2019 թվականին ամենաազատ տնտեսություն ունեցող երկրների ցանկը գլխավորում է Հոնկոնգը (90.2 միավորով), երկրորդ հորիզոնականում է Սինգապուրը (89.4 միավորով), երրորդում՝ Նոր Զելանդիան (84.4 միավորով): Երկրների ցանկը եզրափակում է Հյուսիսային Կորեան՝ 5.9 միավորով:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Տնտեսական ազատության ինդեքսի հաշվարկման մեթոդաբանությունը հիմնվում է չորս հիմնական գործոնների գնահատման վրա, որոնք պայմանավորում են տնտեսական միջավայրը և միաժամանակ գտնվում են կառավարության ազդեցության շրջանակներում: Դրանք են՝


- Օրենքի գերակայությունը,

¹ «Տնտեսական ազատության ինդեքս 2019» ամբողջական զեկույցը հասանելի է համացանցի հետևյալ հասցեում՝ https://www.heritage.org/index/pdf/2019/book/index_2019.pdf

- Պետական հատվածի մեծությունը,
- Պետական կարգավորման արդյունավետությունը,
- Շուկայի բաց լինելը:

Վերոհիշյալ չորս գործոնների ազատության մակարդակը չափելիս գնահատվում են տնտեսական ազատության 12 բաղադրիչներ (տե՛ս Գծապատկեր 1), որոնցից յուրաքանչյուրին տրվում է 0-100 միավոր: Այս 12 բաղադրիչների արժեքները հաշվարկվում են մի շարք վիճակագրական ցուցանիշների հիման վրա, որոնք հավասար կշիռներով միջինացվում են՝ դառնալով մեկ միասնական ինդեքս յուրաքանչյուր երկրի համար:

Գծապատկեր 1. Տնտեսական ազատության 4 գործոնները և ինդեքսի հաշվարկման համար կիրառվող 12 բաղադրիչները



«Հերիթեյջ» հիմնադրամը դիտարկվող երկրները, տնտեսական ազատության ինդեքսներին համապատասխան, դասակարգում է հինգ խոշոր կատեգորիաների: Այսպես՝ 80% և ավելի ինդեքս ունեցող երկրները համարվում են տնտեսապես «ազաւր», 70.0-79.9%՝ «հիմնականում ազաւր», 60.0-69.9%՝ «չափավոր ազաւր», 50.0-59.9%՝ «հիմնականում ոչ ազաւր», 50%-ից ցածր՝ «ճնշված» երկրներ:

2019թ. ՏԱԻ-ի գնահատումն իրականացվել է 2017թ. երկրորդ կիսամյակից մինչև 2018թ. առաջին կիսամյակն ընկած ժամանակահատվածը բնութագրող ցուցանիշների հիման վրա: Հնարավորության սահմաններում օգտագործվել է 2018թ. հուլիսի դրությամբ հասանելի ամենաթարմ տեղեկատվությունը:

ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. **Սեփականության իրավունքի պաշտպանության** բաղադրիչը ցույց է տալիս, թե ինչ չափով է երկրի իրավական համակարգը ապահովում մասնավոր սեփականության ազատ կուտակումը, որքանով է օրենքը պաշտպանում մասնավոր սեփականության իրավունքը և ինչ չափով են այդ օրենքները գործնականում պահպանվում: Այս բաղադրիչը գնահատելիս հաշվի է առնվում նաև պետության կողմից մասնավոր սեփականության բռնագրավման հավանականությունը: Սեփականության իրավունքի պաշտպանության բաղադրիչը գնահատվում է հետևյալ ցուցանիշների հիման վրա՝

- նյութական սեփականության պաշտպանվածություն,
- մտավոր սեփականության պաշտպանվածություն,
- ներդրողների պաշտպանվածության աստիճան,
- մասնավոր սեփականության բռնագրավման հավանականություն,
- հողերի կառավարման որակ:

2. **Արդարադատության արդյունավետությունը** կարևոր նշանակություն ունի բոլոր քաղաքացիների իրավունքներն ինչպես պետությունից, այնպես է մասնավոր հատվածի սուբյեկտներից պաշտպանելու տեսանկյունից: Արդարադատության արդյունավետության ապահովումը պահանջում է արդար դատական համակարգ, որը կարող է ապահովել օրենսդրության պահանջների ամբողջական իրագործումը՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցառումներ օրինախախտների նկատմամբ: Այս բաղադրիչի արժեքը հաշվարկվում է հետևյալ ցուցանիշների հիման վրա՝

- դատարանների անկախությունը,
- դատական գործընթացի որակը,
- որակյալ դատական վճռի կայացման հավանականությունը:

3. **Կոռուպցիայից ազատությունը:** Կոռուպցիան քայքայում է տնտեսական ազատությունը՝ վնասելով անվտանգությունը և տնտեսական հարաբերություններում առաջացնելով խեղումներ: Տնտեսական ազատության վրա ազդեցության տեսանկյունից

ամենամտահոգիչն է պետական համակարգային կոռուպցիան, որը հիմնականում դրսևորվում է կաշառքի, գումարների շորթման, հովանավորչության, պաշտոնական դիրքի չարաշահման և այլ ձևերով: Այսպիսի գործընթացների հետևանքով աճում են գործառնական ծախսերը, և ռեսուրսների տեղաբաշխումը դառնում է ոչ արդյունավետ՝ խաթարելով բնականոն տնտեսական գործունեությունը: Կոռուպցիայից ազատությունը գնահատվում է հետևյալ գործոնների հիման վրա՝

- քաղաքական գործիչների նկատմամբ հանրային վստահությունը,
- անօրինական վճարների և կաշառքների առկայությունը և ծավալները,
- պետական քաղաքականության թափանցիկությունը,
- կոռուպցիայի բացակայությունը,
- կոռուպցիայի ընկալման մակարդակը,
- պետական ծառայությունների թափանցիկությունը:

4. Հարկային բեռը միասնական չափման միավոր է, որն արտացոլում է հարկային դրույքաչափերը՝ ինչպես ֆիզիկական անձանց, այնպես էլ իրավաբանական անձանց եկամուտների նկատմամբ: Այս բաղադրիչը ներառում է նաև ընդհանուր հարկային բեռը, այսինքն՝ փաստացի եկամտի այն մասը, որը վճարվում է պետությանը: Այս բաղադրիչի հաշվարկման համար օգտագործվում են՝

- ֆիզիկական անձանց եկամտային հարկի սահմանային դրույքաչափը,
- կազմակերպությունների շահութահարկի սահմանային դրույքաչափը,
- հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը:

5. Պետական ծախսերի բաղադրիչն ընդգրկում է պետական սպառման և պետության կողմից տրամադրվող տրանսֆերտների (թոշակներ, նպաստներ և այլն) մեծությունը: Տնտեսական ազատության ինդեքսի գնահատման շրջանակներում պետական ծախսերի օպտիմալ մեծության գնահատում չի իրականացվում: Հետևաբար փոքր ծավալով պետական ծախսեր ունեցող երկրները ստանում են ավելի շատ միավորներ: Ստացվում է, որ եթե երկրում պետական ծախսերը հավասար են 0-ի, ապա այդ երկիրը կստանա առավելագույն միավոր այս բաղադրիչի շրջանակներում: Այդպես ցածր զարգացածության աստիճան ունեցող երկրներն այս բաղադրիչով կարող են ունենալ առավելություն: Սակայն դա կչեզոքացվի այլ բաղադրիչների գծով (սեփականության իրավունքի, ֆինանսական ազատության և այլն) ցածր միավորներով: Պետական ծախսերի աճի ազդեցությունը

տնտեսական ազատության ինդեքսի վրա ունի աճողական բնույթ: Դա նշանակում է, որ, օրինակ, Օ-ին մոտ պետական ծախսերը ինդեքսի վրա կունենան փոքր ազդեցություն, իսկ օրինակ, եթե ծախսերը կազմում են ՀՆԱ-ի 30 տոկոսից ավելին, ապա տնտեսական ազատության ինդեքսի վրա բացասական ազդեցությունը լինում է շատ ավելի մեծ: Այս բաղադրիչը գնահատվում է պետական ծախսեր/ՀՆԱ հարաբերակցության հիման վրա:

6. Հարկաբյուջետային կայունությունը: Պետական բյուջեի դեֆիցիտի և պարտքի աճը, որոնք հետևանք են պետական ֆինանսների ոչ արդյունավետ կառավարման, հանգեցնում են հարկաբյուջետային կայունության խաթարմանը: Վերջինս առաջացնում է մակրոտնտեսական անկայունություն և մեծացնում է անորոշությունները: Հարկաբյուջետային կայունությունը գնահատվում է հաշվի առնելով՝

- վերջին երեք տարիների պետական բյուջեի պակասորդի միջին մակարդակը (հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ),
- պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը:

Ի տարբերություն նախորդ բաղադրիչների՝ հարկաբյուջետային կայունությունը գնահատվում է վերոհիշյալ ցուցանիշներին տալով տարբեր կշիռներ՝ համապատասխանաբար 80 և 20 տոկոս:

7. Գործարարության ազատությունը ցույց է տալիս, թե ինչ չափով է պետական կարգավորման և ենթակառուցվածքների համակարգը սահմանափակում ձեռնարկատիրական գործունեության իրականացումը: Այս բաղադրիչի գնահատականը դուրս է բերվում բոլոր այն գործոններից, որոնք ազդում են ձեռնարկատիրական գործունեություն սկսելու, վարելու և ավարտելու գործընթացների վրա:

8. Աշխատանքի ազատության բաղադրիչը քանակապես գնահատում է իրավական և նորմատիվ այն բոլոր կարգավորումները, որոնք ազդեցություն են ունենում աշխատանքի շուկայի վրա: Դրանք ներառում են նվազագույն աշխատավարձի, կրճատումների, աշխատաժամանակի և այլ կարգավորումներ: Այս բաղադրիչի հաշվարկման համար հիմք են հանդիսանում հետևյալ ցուցանիշները՝

- նվազագույն աշխատավարձի հարաբերակցությունը մեկ աշխատողի հաշվով ստեղծված միջին արդյունքին,
- նոր աշխատողի ներգրավման խոչընդոտները,
- աշխատաժամանակի փոփոխության ճկունությունը,

- անարդյունավետ աշխատողներին աշխատանքից ազատման դժվարությունները,
- օրենսդրությամբ կարգավորվող ծանուցման ժամանակահատվածը,
- կրճատման համար պարտադիր վճարները,
- աշխատուժի մասնակցության գործակիցը (տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակի հարաբերակցությունն է բնակչության թվաքանակին):

9. Դրամավարկային ազատությունը համախմբում է գների կայունության և գների կարգավորման գնահատումը: Ե՛վ գնաճը, և՛ գների կարգավորումը խաթարում են շուկայական տնտեսական գործունեությունը: Գների կայունությունն առանց պետական միջամտության լավագույն պայմանն է ազատ շուկայական համակարգի գործունեության համար: Դրամավարկային ազատության գնահատականը հիմնվում է երկու ցուցանիշների վրա: Դրանք են՝

- վերջին երեք տարիների միջին կշռված գնաճը,
- գների կարգավորումը:

10. Առևտրի ազատությունը չափում է ապրանքների և ծառայությունների ներմուծման և արտահանման նկատմամբ կիրառվող սակագնային և ոչ սակագնային սահմանափակումները: Հետևաբար, այս բաղադրիչի գնահատման համար անհրաժեշտ են հետևյալ երկու ցուցանիշները՝

- միջին կշռված մաքսատուրքերի չափը,
- ոչ սակագնային սահմանափակումները:

11. Ներդրումների ազատությունը: Տնտեսապես ազատ երկրում ներդրումային կապիտալը պետք է կարողանա ազատորեն հոսել ինչպես երկրի տարածքում, այնպես էլ երկրի սահմաններից ներս և դուրս: Սակայն գործնականում երկրների մեծամասնությունն ունի ներդրումների հետ կապված որոշակի սահմանափակումներ՝ տարբեր կարգավորումներ ունենալով օտարերկրյա և ներքին ներդրումների համար: Կարգավորումները կարող են կապված լինել փոխարժեքի առավաճառքի, կապիտալի շարժի, վճարումների և այլ գործարքների հետ:

12. Ֆինանսական ազատությունը բանկային համակարգի արդյունավետության, անկախության և ֆինանսական համակարգի ինտեգրման ցուցիչ է: Ֆինանսական

համակարգի կազմակերպությունների կապիտալում պետական մասնակցության մեծ բաժինը բացասաբար է անդրադառնում մրցակցության վրա և նվազեցնում է ֆինանսական համակարգի արդյունավետությունը: Ըստ այս բաղադրիչի՝ կատարյալ ազատ ֆինանսական համակարգում պետությունը պետք է ունենա նվազագույն մասնակցություն և միջամտություն: Ֆինանսական ազատությունը գնահատվում է հինգ հիմնական ուղղությունների հիման վրա: Դրանք են՝

- ֆինանսական ծառայությունների պետական կարգավորման աստիճանը,
- ուղղակի կամ անուղղակի տնօրինման եղանակով ֆինանսական կազմակերպությունների գործունեությանը պետական միջամտության չափը,
- վարկերի տեղաբաշխման գործընթացի վրա կառավարության ունեցած ազդեցության չափը,
- կապիտալի շուկայի զարգացածության մակարդակը,
- միջազգային մրցակցության առկայությունը:

Այս հինգ գործոնները գնահատում են տնտեսության ֆինանսական ազատության ընդհանուր մակարդակը, որը թույլ է տալիս բնակչությանը և կազմակերպություններին արդյունավետորեն հասանելիություն ունենալ ֆինանսական ծառայություններին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ


ՀՀ տնտեսական ազատության ինդեքսը, ըստ 2019թ. զեկույցի, կազմել է 67.7 միավոր՝ գերազանցելով համաշխարհային միջին ինդեքսը մոտ 6.9 միավորով, ինչի արդյունքում Հայաստանը 180 երկրների շարքում զբաղեցրել է 47-րդ հորիզոնականը: Ըստ «Հերիթեյջ» հիմնադրամի դասակարգման՝ Հայաստանը համարվել է «չափավոր ազատ» տնտեսություն ունեցող երկիր: Չնայած ինդեքսի անկմանը՝ Հայաստանը ներառվել է գնահատվող երկրների ցանկում ամենամեծ առաջընթաց ունեցած երկրների շարքում՝ ՏԱԻ-ի գնահատման առաջին տարվա² նկատմամբ բարելավելով իր ինդեքսը 25.5 միավորով:

Նախորդ տարվա գնահատականի նկատմամբ ինդեքսը նվազել է 1.0 միավորով, ինչի հիմնական պատճառներն են *հարկաբյուջեային կայունության* կտրուկ նվազումը

² ՀՀ տնտեսության համար տնտեսական ազատության ինդեքսը առաջին անգամ գնահատվել է 1996թ. զեկույցում և կազմել է 42.2 միավոր:


(14.2 միավորով), *կոռուպցիայից ազատության* բաղադրիչի ավելի ցածր (1.9 միավորով) միավորը և *արդարադատության արդյունավետության* անկումը (1.1 միավորով): Հայաստանը Եվրոպական տարածաշրջանի 44 երկրների շարքում զբաղեցրել է 24-րդ տեղը՝ փոքր-ինչ զիջելով տարածաշրջանային միջին ինդեքսի (68.6 միավոր) արժեքին և նախորդ տարվա համեմատ գրանցելով անկում 4 հորիզոնականով: Տնտեսական ազատության ինդեքսի բաղադրիչների շարքում աճ է արձանագրվել դրամավարկային ազատության (2.0 միավորով), սեփականության իրավունքի պաշտպանության (1.9 միավորով), աշխատանքի ազատության (1.5 միավորով) և առևտրի ազատության (0.8 միավորով) բաղադրիչների գծով: Սակայն, այս աճերը եղել են փոքր, այդ պատճառով 2019թ. չի հաջողվել բարելավել ՏՄԻ-ի ընդհանուր արժեքը:

Գծապատկեր 2. 2019թ. ՀՀ տնտեսական ազատության ինդեքսը և 12 բաղադրիչները




ՏՄԻ 2019թ. վաղաժամանակ ամենաշատը նպաստել է հարկաբյուջետային կայունության բաղադրիչը, ինչի պատճառն են եղել ինչպես վերջին երեք տարիների պետական բյուջեի պակասուրդ/ՀՆԱ հարաբերակցության միջին մակարդակի աճը, այնպես էլ պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցության աճը: Նշված մակրոտնտեսական ցուցանիշների աղբյուր է հանդիսացել Արժույթի միջազգային հիմնադրամի տվյալների բազան, ըստ որի պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը 2017թ. կազմել է 53.5 տոկոս՝ նախորդ տարվա 51.8 տոկոսի փոխարեն, իսկ պետական բյուջեի պակասուրդ/ՀՆԱ հարաբերակցության վերջին երեք տարիների միջին արժեքը կազմել է 5.1 տոկոս՝ նախորդ տարվա 4.1 տոկոսի փոխարեն:

Գծապատկեր 3. ՀՀ տնտեսական ազատության ինդեքսը և զբաղեցրած դիրքը վերջին երեք տարիներին



Վերջին երեք տարիներին ՀՀ ՏԱԻ-ի շարժընթացն ունի նվազման միտում (տե՛ս Գծապատկեր 3): Ոչ միայն նվազել է ՏԱԻ-ի արժեքը, այլև վատթարացել են ՀՀ զբաղեցրած հորիզոնականները: Այսպես՝ 2019թ. 180 երկրների շարքում Հայաստանն իր դիրքերը զիջել է 3 հորիզոնականով, իսկ տարածաշրջանային համեմատության մեջ՝ 4 հորիզոնականով: Նախորդ տարվա գնահատականներով նույնպես արձանագրվել է արդյունքների վատթարացում: Այսպես՝ 2018-ին 2017-ի համեմատ ՀՀ դիրքը 180 երկրների շարքում նվազել է 11, իսկ տարածաշրջանային համատեքստում՝ 1 հորիզոնականով:

Գծապատկեր 4. Տնտեսական ազատության ինդեքսի շարժընթացը, 2008-2019թթ.



Պատմականորեն Հայաստանը ՏԱԻ-ի միավորով մինչև 2018թ. առաջ է եղել ինչպես աշխարհի միջին ցուցանիշից, այնպես էլ տարածաշրջանային (Եվրոպայի) միջինից: ՀՀ

ՏԱԻ-ի ամենաբարձր միավորը գրանցվել է 2017 թվականին՝ կազմելով 70.3 միավոր, ինչի արդյունքում Հայաստանը «չափավոր ազատ» երկրների շարքից տեղափոխվել է «հիմնականում ազատ» տնտեսություն ունեցող երկրների շարք: Սակայն հենց հաջորդ տարի ՀՀ ՏԱԻ-ի միավորը սկսել է նվազել և 2019թ. գնահատականներով եղել է փոքր-ինչ ավելի ցածր, քան Եվրոպական երկրների միջին միավորը: Հայաստանին ընդամենը մեկ տարի է հաջողվել պահպանել «հիմնականում ազատ» տնտեսություն ունեցող երկրի կարգավիճակը:

Գծապատկեր 5. 2018 և 2019 թվականների տնտեսական ազատության ինդեքսի և բաղադրիչների համեմատությունը 2017 թվականի գնահատականների հետ

Համեմատություն 2017թ.-ի նկատմամբ		
	2018	2019
Տնտեսական ազատության ինդեքս	-1.6	-2.6
Սեփականության իրավունքի պաշտպանություն	-0.2	1.7
Արդարադատության արդյունավետություն	4.9	3.8
Կոռուպցիայից ազատություն	-2.9	-4.8
Հարկային բեռ	1.0	1.0
Պետական ծախսեր	-1.7	-2.7
Հարկաբյուջետային կայունություն	-15.7	-29.9
Գործարարության ազատություն	0.2	-0.2
Աշխատանքի ազատություն	-2.5	-1.0
Դրամավարկային ազատություն	3.0	5.0
Առևտրի ազատություն	-0.2	0.6
Ներդրումների ազատություն	-5.0	-5.0
Ֆինանսական ազատություն	0.0	0.0

Քանի որ ՏԱԻ-ի պատմական ամենաբարձր ցուցանիշը եղել է 2017 թվականին, անհրաժեշտություն է առաջանում 2018 և 2019 թվականների գնահատականները համեմատել այդ տարվա հետ, որպեսզի հնարավոր լինի հասկանալ ինդեքսի անկման

հիմնական պատճառները: Գծապատկեր 5-ում ներկայացված համեմատությունից երևում է, որ «հիմնականում ազատ» դասակարգումից «չափավոր ազատ» դասակարգման անցնելու գլխավոր պատճառներն են հարկաբյուջետային կայունության անկումը, ներդրումների ազատության վատթարացումը, կոռուպցիայից ազատության անկումը և պետական ծախսերի կշռի աճը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԴՐՈՒՄՆԵՐ


Ըստ «Հերիթեյջ» հիմնադրամի՝ 2019 թվականին ամենաազատ տնտեսություն ունեցող երկիրը Հոնկոնգն է, որը ստացել է 90.2 միավոր: Երկրորդ հորիզոնականում է Սինգապուրը՝ 89.4 միավորով, երրորդը՝ Նոր Զելանդիան՝ 84.4 միավորով: Չորրորդ և հինգերորդ հորիզոնականները զբաղեցնում են համապատասխանաբար Շվեյցարիան և Ավստրալիան: Իռլանդիան, ունենալով 80.5 միավոր և զբաղեցնելով 6-րդ տեղը, եզրափակում է «ազատ» կատեգորիայում դասակարգված երկրների շարքը: 2019թ. գնահատականների արդյունքով առավել ոչ ազատ երկիրն է համարվում Հյուսիսային Կորեան, որը ստացել է 5.9 միավոր:

Եվրոպական երկրների շարքում ամենաազատ երկրների եռյակում են Շվեյցարիան, Իռլանդիան և Միացյալ Թագավորությունը, իսկ առավել ոչ ազատ երկրները՝ Բելառուսը, Հունաստանը և Ուկրաինան:

Հարևան երկրների շարքում տնտեսական ազատության ինդեքսով ամենաբարձր դիրքում է Վրաստանը՝ ունենալով 75.9 միավոր և զբաղեցնելով աշխարհում 16-րդ, իսկ Եվրոպայի երկրների շարքում՝ 8-րդ տեղը: Մյուս հարևան երկրները իրենց գնահատականներով հետ են մնում Հայաստանից: Ադրբեյջանը բոլոր երկրների ցանկում զբաղեցնում է 60-րդ, իսկ իր տարածաշրջանում (Ասիա և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջան)՝ 13-րդ հորիզոնականը: Թուրքիայի տնտեսական ազատության ինդեքսը կազմել է 64.6 միավոր, ինչի արդյունքում երկիրը զբաղեցրել է 68-րդ հորիզոնականը աշխարհի երկրների շարքում և 33-րդ հորիզոնականը՝ Եվրոպայի երկրների շարքում: Իրանը, ըստ «Հերիթեյջ» հիմնադրամի, դասակարգվում է «հիմնականում ոչ ազատ» տնտեսություն ունեցող երկրների շարքում՝ 2019թ. ստանալով 51.1 միավոր և զբաղեցնելով աշխարհի երկրների շարքում 155-րդ հորիզոնականը:

Բոլոր տարածաշրջանների միջին ինդեքսները նվազել են 2019 թվականի գնահատման արդյունքներով, բացառությամբ Միջին Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի տարածաշրջանի: Ամենաբարձր միջին արժեքն ունեն Եվրոպայի երկրները՝ 68.6 միավոր 2019թ., որը զգալիորեն ավելի բարձր է հաջորդ տեղում գտնվող Միջին Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի տարածաշրջանի երկրների միջին միավորից:


Գծապատկեր 6. Տնտեսական ազատության ինդեքսի տարածաշրջանային միջին արժեքները և Հայաստանի գնահատականը, 2017-2019թթ.



ՀՀ ՏԱԻ-ն վերջին երեք տարիների գնահատականներով գերազանցում է ինչպես աշխարհի միջին արժեքը, այնպես էլ բոլոր տարածաշրջանային միջինները, բացառությամբ Եվրոպայի, որի միջին արժեքը 2018 և 2019 թվականների գնահատականներով փոքր-ինչ գերազանցել է Հայաստանի միավորին:

Գծապատկեր 7-ում ներկայացված երկրների շարքում Հայաստանը զիջում է միայն Վրաստանի ցուցանիշին: Թեև 2019թ. գնահատականներով Հայաստանի ՏԱԻ-ն նվազել է 1.0 միավորով, սակայն այն դեռևս մնում է բարձր հարևան երկրների և ԵԱՏՄ անդամ երկրների նույն ցուցանիշների նկատմամբ:

Գծապատկեր 7. Հայաստանի և մի շարք այլ երկրների տնտեսական ազատության ինդեքսները վերջին երեք տարիներին³



³ Հայաստանի և այլ երկրների ինդեքսների համեմատականն աղյուսակի տեսքով ներկայացված է հավելվածում:

**Հայաստանի և մի շարք այլ երկրների տնտեսական ազատության
ինդեքսները 2008-2019թթ.**

Երկրները	Տնտեսական ազատության ինդեքսը											
	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019
Հայաստան	69.9	69.9	69.2	69.7	68.8	69.4	68.9	67.1	67.0	70.3	68.7	67.7
Ադրբեջան	55.3	58.0	58.8	59.7	58.9	59.7	61.3	61.0	60.2	63.6	64.3	65.4
Բելառուս	45.3	45.0	48.7	47.9	49.0	48.0	50.1	49.8	48.8	58.6	58.1	57.9
Բելգիա	71.7	72.1	70.1	70.2	69.0	69.2	69.9	68.8	68.4	67.8	67.5	67.3
Չինաստան	53.1	53.2	51.0	52.0	51.2	51.9	52.5	52.7	52.0	57.4	57.8	58.4
Չեխիա	68.1	69.4	69.8	70.4	69.9	70.9	72.2	72.5	73.2	73.3	74.2	73.7
Էստոնիա	77.9	76.4	74.7	75.2	73.2	75.3	75.9	76.8	77.2	79.1	78.8	76.6
Ֆրանսիա	64.7	63.3	64.2	64.6	63.2	64.1	63.5	62.5	62.3	63.3	63.9	63.8
Վրաստան	69.2	69.8	70.4	70.4	69.4	72.2	72.6	73.0	72.6	76.0	76.2	75.9
Գերմանիա	70.6	70.5	71.1	71.8	71.0	72.8	73.4	73.8	74.4	73.8	74.2	73.5
Հունաստան	60.6	60.8	62.7	60.3	55.4	55.4	55.7	54.0	53.2	55.0	57.3	57.7
Իրան	45.0	44.6	43.4	42.1	42.3	43.2	40.3	41.8	43.5	50.5	50.9	51.1
Ղազախստան	61.1	60.1	61.0	62.1	63.6	63.0	63.7	63.3	63.6	69.0	69.1	65.4
Ղրղզստան	61.1	61.8	61.3	61.1	60.2	59.6	61.1	61.3	59.6	61.1	62.8	62.3
Լատվիա	68.3	66.6	66.2	65.8	65.2	66.5	68.7	69.7	70.4	74.8	73.6	70.4
Լիտվա	70.9	70.0	70.3	71.3	71.5	72.1	73.0	74.7	75.2	75.8	75.3	74.2
Մոլդովա	57.9	54.9	53.7	55.7	54.4	55.5	57.3	57.5	57.4	58.0	58.4	59.1
Նիդերլանդներ	77.4	77.0	75.0	74.7	73.3	73.5	74.2	73.7	74.6	75.8	76.2	76.8
Հոլանդիա	60.3	60.3	63.2	64.1	64.2	66.0	67.0	68.6	69.3	68.3	68.5	67.8
Ռուսաստան	49.8	50.8	50.3	50.5	50.5	51.1	51.9	52.1	50.6	57.1	58.2	58.9
Սլովակիա	70.0	69.4	69.7	69.5	67.0	68.7	66.4	67.2	66.6	65.7	65.3	65.0
Շվեդիա	70.8	70.5	72.4	71.9	71.7	72.9	73.1	72.7	72.0	74.9	76.3	75.2
Տաջիկստան	54.4	54.6	53.0	53.5	53.4	53.4	52.0	52.7	51.3	58.2	58.3	55.6
Թուրքիա	59.9	61.6	63.8	64.2	62.5	62.9	64.9	63.2	62.1	65.2	65.4	64.6
Ուկրաինա	51.0	48.8	46.4	45.8	46.1	46.3	49.3	46.9	46.8	48.1	51.9	52.3
ԱՄՆ	81.0	80.7	78.0	77.8	76.3	76.0	75.5	76.2	75.4	75.1	75.7	76.8

**2019թ. Հայաստանի և մի շարք այլ երկրների տնտեսական ազատության
ինդեքսի և դրա բաղադրիչների արժեքները**

	Տնտեսական ազատության ինդեքս	Սեփականության իրավունքի պաշտպանություն	Արդարադատության արդյունավետություն	Կոռուպցիայից ազատություն	Հարկային բեռ	Պետական ծախսեր	Հարկաբյուջետային կայունություն	Գործարարության ազատություն	Աշխատանքի ազատություն	Դրամավարկային ազատություն	Առևտրի ազատություն	Ներդրումների ազատություն	Ֆինանսական ազատություն
Հայաստան	67.7	57.2	46.3	38.6	84.7	79.0	53.0	78.3	71.4	77.8	80.8	75.0	70.0
Ադրբեջան	65.4	59.1	53.1	44.7	87.5	59.5	89.4	69.5	63.9	63.0	74.6	60.0	60.0
Բելառուս	57.9	55.2	51.7	37.7	89.4	41.3	85.4	75.0	75.3	67.0	76.4	30.0	10.0
Բելգիա	67.3	81.3	61.6	72.5	47.1	15.2	73.4	78.1	61.0	76.1	86.0	85.0	70.0
Չինաստան	58.4	49.9	75.2	49.1	70.4	70.1	76.0	56.2	64.2	71.9	73.0	25.0	20.0
Չեխիա	73.7	74.8	47.6	52.1	82.6	52.1	97.6	72.4	78.1	81.5	86.0	80.0	80.0
Էստոնիա	76.6	81.5	76.0	73.1	79.9	51.1	99.8	75.3	57.2	79.6	86.0	90.0	70.0
Ֆրանսիա	63.8	82.5	66.1	67.9	48.4	3.9	64.9	81.2	45.2	79.1	81.0	75.0	70.0
Վրաստան	75.9	65.9	54.6	58.5	87.1	73.6	93.9	85.8	76.6	76.0	88.6	80.0	70.0
Գերմանիա	73.5	79.9	75.4	81.3	60.8	42.3	91.8	83.3	52.8	77.9	86.0	80.0	70.0
Հունաստան	57.7	52.4	49.5	37.7	59.1	23.3	79.0	74.1	52.5	79.1	81.0	55.0	50.0
Հունկոնգ	90.2	93.3	75.3	83.8	93.1	90.3	100.0	96.4	89.2	86.4	95.0	90.0	90.0
Իրան	51.1	33.5	41.3	35.0	80.9	89.8	89.5	62.2	50.7	60.1	54.6	5.0	10.0
Ղազախստան	65.4	59.3	56.1	40.3	93.4	83.7	41.0	73.9	86.2	70.9	80.0	50.0	50.0
Ղրղզստան	62.3	49.9	27.9	27.2	94.1	54.2	78.4	73.4	79.8	74.4	78.6	60.0	50.0
Լատվիա	70.4	67.3	48.4	35.5	77.0	57.1	96.9	77.5	73.3	81.1	86.0	85.0	60.0
Լիտվա	74.2	73.6	61.2	47.8	86.4	65.1	97.3	75.2	63.6	84.6	86.0	80.0	70.0
Մոլդովա	59.1	55.2	29.6	25.4	85.4	59.1	92.0	67.0	39.0	73.5	78.0	55.0	50.0
Նիդերլանդներ	76.8	88.0	74.7	89.1	51.6	42.9	93.3	81.4	60.3	84.0	86.0	90.0	80.0
Հոլանդիա	67.8	62.3	44.0	49.8	74.9	48.8	86.4	65.4	63.9	82.1	86.0	80.0	70.0
Ռուսաստան	58.9	52.4	45.1	36.6	89.4	62.3	86.6	78.4	52.5	65.1	77.8	30.0	30.0
Սլովակիա	65.0	68.5	37.2	37.7	78.6	46.1	87.2	61.3	53.4	78.6	86.0	75.0	70.0
Շվեյցարիա	81.9	85.3	82.0	88.0	70.5	64.8	96.3	75.4	72.5	85.2	87.4	85.0	90.0
Թուրքիա	64.6	55.8	49.8	41.2	76.4	65.1	92.2	66.0	49.2	70.0	79.6	70.0	60.0
Ուկրաինա	52.3	43.9	31.5	29.6	81.8	46.9	82.6	66.1	46.7	58.6	75.0	35.0	30.0

**«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է
ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների
բացառիկ իրավատերերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:**

**Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է
իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան [ակտիվ հղման](#) տեղադրման
պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:**